նվազում են: Փորձարկվող սորբենտներից պղնձի և ցիրկոնիումի ֆերոցիանիդային
նմուշները ֆոնի կոնցենտրացիայի փոփոխությունից ավելի քիչ զգայուն են: Այսպես,
ցեզիումի կորզման աստիճանը, նշված սորբենտներով աղապարունակությունից
կախված, փոքրանում է $\sim 10\ldots 15\%$ -ով: Փորձնական արդյունքները բերված են նկ. 2-ում
կորերի տեսքով:



Նկ. 2. Աղային ֆոնի կոնցենտրացիայից ($C, \text{գ գլ}^{-1}$) ցեզիումի կորզման աստիճանի
($E, \%$) կախվածությունը: 1. բենտոնիտ + CuFg ; 2. բենտոնիտ + ZrFg

Աղապարունակության զգալի ազդեցությունը դիտարկվել է բենտոնիտը նիկելի
ֆերոցիանիդով մոդիֆիկացված սորբենտի դեպքում՝ ցեզիումի կորզման աստիճանը
փոքրանում է $\sim 30\%$ -ով:

Ստացված արդյունքներից հետևում է, որ ցեզիումի և ստրոնցիումի նկատմամբ
բնական ալյումոսիլիկատի ցուցաբերող սորբցիոն ունակության մեծացման ուղիներից
մեկը նրա մոդիֆիկացումն է ծանր մետաղների ֆերոցիանիդներով: Կոմպոզիցիոն
նյութերի սինթեզը հնարավորություն է տալիս ստանալ հանքանյութեր պարունակող
ջրերից ռադիոնուկլիդների կորզման ընտրողական հատկություններով օժտված
սորբենտներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. А.с. 1115792 СССР, МКИ В 01J20/00. Способ получения композиционного ферроцианидного сорбента.
2. **Таканаев И.В., Сейфер Г.Б., Харитонов Ю.А.** и др. Химия ферроцианидов. - М.: Наука 1971.-320 с.
3. **Панасюгин А.С., Радько А.И.** и др. Ионообменные свойства клиноптилолита, модифицированного ферроцианидом сурьмы// Прикладная химия.-М., 1995.-Том 18, N12.-С. 2054-2056.

ՀՊՃՀ. Նյութը ներկայացվել է խմբագրություն 07.02.2009.

М. А. СИРАКАНЯН, Г.Ц. ВАРДЕРЕСЯН, Н.К. ГАСПАРЯН, А.Т. ТОРОСЯН

ИССЛЕДОВАНИЕ СОРБЦИИ ЦЕЗИЯ И СТРОНЦИЯ ИЗ МИНЕРАЛИЗОВАННЫХ ВОДНЫХ РАСТВОРОВ

Изучено сорбционное поведение природного и модифицированного ферроцианидами тяжелых металлов бентонита по отношению к цезию и стронцию. Установлено, что синтезированные композиционные сорбенты проявляют селективные сорбционные свойства, что дает возможность осуществить извлечение радионуклидов из высокоминерализованных вод.

Ключевые слова: бентонит, ферроцианид, сорбент, модификация.

M.A. SIRAKANYAN, G.C. VARDERESYAN, N.K. GASPARYAN, A.T. TOROSYAN

CESIUM AND STRONTIUM IONS SORPTION INVESTIGATION FROM THE MINERALIZED AQUEOUS SOLUTION

The sorption behaviour of natural bentonite and heavy ferrocyanide metals is investigated in accordance with modified composite sorbents. It is approved that synthesized composite sorbents display selective sorption specifications to cesium and strontium, giving us an opportunity to generate radionucleoids from highwaters minerals.

Keywords: bentonite, ferrocyanide, sorbent, modification.

**ԶՈՒԼՎԱԾ ՆԻԿԵԼ-ՑԻՆԿԱՅԻՆ ՍՊԻՏԱԿ ՈՄԿՈՒ 585 ՀԱՐԳԻ
ՀԱՄԱԶՈՒԼՎԱԾՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ՏԱՐԲԵՐ ԶԵՐՄԱՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ**

Կատարվել են տարբեր ջերմամշակման ռեժիմների դեպքում նիկել-ցինկային 585 հարգի ձուլված վիճակում գտնվող սպիտակ ոսկու համաձուլվածքի կառուցվածքի և հատկությունների հետազոտություններ՝ ռենտգենագրային, մետաղագրային, ջերմաձանրաչափական վերլուծությունների միջոցով: Մշակվել են նախնական և վերջնական ջերմամշակման ռեժիմներ:

Առանցքային բառեր. ջերմամշակում, հարգ, սպիտակ ոսկի, համաձուլվածք, ռենտգենագրային, մետաղագրային, ջերմաձանրաչափական, վերլուծություն:

Ընդհանրապես աշխարհում և հատկապես Հայաստանում ոսկերչական արտադրությունը կարևոր տեղ է զբաղեցնում արտադրական ոլորտում: Քանի որ ոսկերչական արտադրության մեջ իրերի մեծ մասը՝ 50...60%-ից ոչ պակաս, ստացվում է ձուլման եղանակով՝ համապատասխան դենդրիտալիկվացված կառուցվածքով, որը հետագայում չի հոմոգենացվում, հետագա մշակումը կատարվում է այդ վիճակում և իրերը ժառանգում են այդ կառուցվածքը և համապատասխան հատկությունները, խնդիր է առաջանում փոփոխել հատկություններն անհրաժեշտ ուղղությամբ, ավելի կոնկրետ.

1. ձուլված շինածոների մշակելիության բարձրացում,
2. կարծրության և ամրության բարձրացում՝ վերջնական շահագործման հատկությունների և ապրանքային տեսքի բարելավման նպատակով:

Նշված խնդիրների լուծման համար ուսումնասիրվել են սպիտակ ոսկու երկակի Au-Ni, Au-Cu, Au-Zn և եռակի Au-Cu-Ni համակարգի վիճակի դիագրամները և Zn-ի ազդեցությունը նշված համակարգերի համաձուլվածքների վրա:

Au և Ni-ը միմյանց մեջ լուծվում են անսահմանափակ ձևով հեղուկ վիճակում, բարձր ջերմաստիճաններում՝ նաև պինդ վիճակում: Հետազոտությունները ցույց են տվել, որ 70% (ատ.) Ni-ի պարունակության դեպքում 812° C-ից սկսած տեղի է ունենում հոմոգեն պինդ լուծույթի տրոհում ոսկու և նիկելի հիմքով պինդ լուծույթների խառնուրդի [1]: Այսպիսով, դանդաղ սառեցված համաձուլվածքներն ունեն երկֆազ կառուցվածք:

Au-Cu համակարգի համաձուլվածքներում սոլիդուսի ջերմաստիճանից ցածր առաջանում են անսահմանափակ պինդ լուծույթներ: Au-Cu համակարգի բնորոշ առանձնահատկությունը դանդաղ սառեցման ժամանակ կարգավորված ֆազի առաջացումն է, որն առաջին անգամ հայտնաբերել է Կուրնակովը, և որի էությունը դիֆուզիոն տեղափոխությունների միջոցով բյուրեղում ատոմների փոխադարձ դասավորության փոփոխումն է: Չկարգավորված AuCu բաղադրության համաձուլվածքի ֆազային փոխակերպությունը տեղի է ունենում հետևյալ կերպ. սկզբում կրիտիկականից ցածր ջերմաստիճանի նվազմանը զուգընթաց չկարգավորված մայրակում առաջանում են կարգավորված սաղմեր, որոնք հետո աճում են չկարգավորված ֆազի հաշվին, և ընդհանուր կարգավորվածությունը կտրուկ մեծանում է:

Au-Zn համակարգում գոյություն ունեն հետևյալ քիմիական միացությունները՝ Au_3Zn (9,95%), AuZn (24,90%) և AuZn_3 (49,6%): Այս միացություններից միայն AuZn է, որ ունի բաց մաքսիմում լիկվիդուսի կորի վրա (725°C), այն դեպքում, երբ Au_3Zn և AuZn_3 միացությունները առաջանում են α և β պինդ լուծույթների կարգավորման արդյունքում՝ համապատասխանաբար 425°C և 515°C -ում: Այս համակարգում կա երկու էվտեկտիկական, երկու պերիտեկտիկական, հինգ էվտեկտոիդային և երեք պերիտեկտոիդային փոխակերպություն:

Ժամանակակից ոսկերչության մեջ շատ են օգտագործվում 585 հարգի սպիտակ ոսկու համաձուլվածքներ: Մեծ կիրառություն ունեն Au-Cu-Ni-Zn համաձուլվածքները: Աղյուսակ 1-ում բերված է ուսումնասիրվող 585 հարգի նիկել-ցինկային սպիտակ ոսկու համաձուլվածքի բաղադրությունը:

Աղյուսակ 1

Սպիտակ ոսկու համաձուլվածքի բաղադրությունը

Տարր	Au	Cu	Ni	Zn
Պարունակ., %	58,5	26,8	8,6	6,1

Ուսումնասիրվող համաձուլվածքը ստացվել է՝ օգտագործելով PROGOLD ֆիրմայի (Իտալիա) ձուլման համար նախատեսված LUX-105 սպիտակ ոսկու լիգատուրա:


585 հարգի սպիտակ ոսկու համաձուլվածքի ուսումնասիրության համար հիմք է հանդիսանում Au-Cu-Ni համակարգի եռակի վիճակի դիագրամը:

Անմիջապես սոլիդուսի մակերևույթից ներքև բոլոր համաձուլվածքները ունեն նիստակենտրոն խորանարդային ցանցով (Fv12) կառուցվածք: Au-Ni համակարգում առկա համասեռ պինդ լուծույթի տրոհումը Cu -ի ավելացման հետ տեղի է ունենում ավելի բարձր ջերմաստիճաններում՝ հասնելով առավելագույնս 970°C ՝ $20\%\text{Au}+60\%\text{Ni}+20\%\text{Cu}$ պարունակության դեպքում, այսինքն՝ տեղի է ունենում բինոդալ մակերևույթի ջերմաստիճանի բարձրացում՝ Cu -ի հավելման հետևանքով:

Կատարվել է պոլիթերմ կտրվածքի կառուցում՝ 585 հարգի սպիտակ ոսկու համաձուլվածքների համար՝ ելնելով Au-Cu-Ni համակարգի լիկվիդուսի ջերմաստիճանների և երկֆազ տիրույթների ուսումնասիրություններից: Ջերմաձանրաչափական և դիֆերենցյալ վերլուծության եղանակով որոշվել է ցինկի ազդեցությունը լիկվիդուսի և սոլիդուսի ջերմաստիճանների վրա, ինչպես նաև պինդ լուծույթի տրոհման սկզբնական ջերմաստիճանը:

Ջերմագրերի վրա պարզ երևում է, որ 585 հարգի նշված բաղադրության համաձուլվածի լիկվիդուսի ջերմաստիճանը 930°C է, իսկ սոլիդուսինը 890°C (նկ.1):

Ըստ Au-Cu-Ni համակարգի պոլիթերմ կտրվածքի՝ լիկվիդուսի և սոլիդուսի կետերին համապատասխանում են 972°C և 935°C : Այսինքն՝ 585 հարգի սպիտակ ոսկու համաձուլվածքում Zn -ի առկայությունը նվազեցնում է լիկվիդուսի և սոլիդուսի ջերմաստիճանները $40...45^\circ\text{C}$ -ով: Ջերմագրի վրա տրոհման և կարգավորման ջերմային էֆեկտները փոքր են, այդ պատճառով միայն պայմանականորեն կարելի է որոշել տրոհման ջերմաստիճանը՝ $\sim 570^\circ\text{C}$:




Նկ.1. Au-Cu-Ni-Zn (58,5-26,8-8,6-6,1) համաձուլվածքի
դերիվատոգիքը
TG-գանգվածի փոփոխություն,
DTG-գանգվածի փոփոխության դիֆերենցիալը,
DTA-դիֆերենցիալ-թերմիկ վերլուծության կորը,
T-ջերմաստիճանի փոփոխությունը

Ջերմամշակման փորձարկումներն իրականացվել են հծԿԽ-1,6,2,5.1/9-Լիժոլիս4.2 մակնիշի լաբորատոր խցային դիմադրության էլեկտրավառարանում՝ տարբեր ջերմաստիճանաժամանակային ռեժիմներով: Որպես նմուշ օգտագործվել են ձուլման կանգնակից կտրրված տեմպլետները: Ելնելով ջերմածանրաչափական վերլուծության տվյալներից և հաշվի առնելով, որ ջերմամշակումն անհրաժեշտ է կատարել ոչ բարձր ջերմաստիճանում՝ զարդերի վրա տեղադրված քարերին չվնասելու համար, ինչպես նաև էներգետիկ կորուստները նվազեցնելու նպատակով, փորձարկումները կատարվում են հետևյալ ջերմաստիճաններում՝ 330°C, 270°C, 250° C՝ տարբեր պահման տևողությունների և սառեցման արագությունների կիրառմամբ: Նշված ռեժիմներով ջերմամշակումներից հետո որոշվել են նաև նմուշների միկրոկարծրությունները կՕՁ-3 միկրոկարծրաչափի վրա՝ 100գ բեռնվածության դեպքում: Ըստ ԳՈՍՏ 9450-76 միկրոկարծրությունը ($կգ/մմ^2$) նշվում է առանց չափման միավորի՝ նշելով բեռնվածությունը [2]: Չափումների արդյունքում ստացել ենք հետևյալ տվյալները. ձուլված համաձուլվածքի համար 195HV0,1, կարգավորված համաձուլվածքի համար ստացվել է նվազագույն միկրոկարծրությունը՝ 115HV0,1, 330°C-ում ձուլված համաձուլվածքի 1 ժամ պահումից և օդում սառեցումից հետո 204HV0,1, նախապես կարգավորված համաձուլվածքը 330°C-ում 1 ժամ պահումից և օդում սառեցումից հետո 214HV0,1: Ըստ երևույթին միկրոկարծրության աճը պայմանավորված է ցինկիդների առաջացմամբ (նկ.2): Առավելագույն միկրոկարծրությունը ստացվել է 250°C-ում 2,5 ժամ պահումից և վառարանի հետ սառեցումից հետո՝ 258HV0,1: Բարձր միկրոկարծրությունը բացատրվում է պինդ լուծույթի տրոհմամբ:

Յուրաքանչյուր ռեժիմի դեպքում կատարվել են մետաղագրային, ռենտգենագրային և միկրոկարծրության որոշման փորձարկումներ, որոնց արդյունքները բերվում են ստորև: Նմուշները ենթարկվել են հաստատուն ռեժիմներով նկարահանման Δ POH-2.0 դիֆրակտոմետրով՝ Cu-K α ճառագայթներով: Նկ.2-ում բերված է 330°C-ում և 270°C-ում տարբեր ռեժիմներով ջերմամշակված համաձուլվածքի ռենտգենագրերը: Ձուլված համաձուլվածքի ջերմամշակումը 330° C-ից ցույց է տալիս, որ այդ ջերմաստիճանում համաձուլվածքը չի կարգավորվում, և հետագայում 270° C-ից օդում սառեցումից հետո կարգավորումը նույնպես բացակայում է: Կարգավորում չկա նաև 270° C ջերմամշակումից հետո:

Նկ.3-ում բերված են մինչև 250° C տաքացված և տարբեր պահման տևողությամբ (մինչև 6 ժամ) նմուշների դիֆրակտոգրերը: Այս ջերմաստիճանում կատարված փորձերը ցույց են տալիս, որ արդեն 2,5 ժամ պահումից հետո համաձուլվածքը կարգավորվում է ~70%-ով և հետագայում կարգավորվածության աստիճանը չի փոխվում: Հետագա ջերմամշակումը 330°C-ում, բերում է կարգավորվածության նվազման, որը ցույց է տալիս պինդ լուծույթի ռեֆլեքսների ինտենսիվության փոփոխությունները:

250°C տաքացումից, 2,5 ժամ պահումից և վառարանում սառեցումից հետո համաձուլվածքի դիֆրակտոգրեր բերված է նկ.4-ում:



Նկ.2. 585 հարգի


Au-Cu-Ni-Zn 58,5-26,8-8,6-6,1

բաղադրության համաձուլվածքի դիֆրակտոգրերը.

ա) ձուլումից հետո,

բ) 330° C-ում 1 ժամ պահումից հետո՝ սառեցումը օդում,

գ) 330° C-ում 1 ժամ և 270° C-ում 3 ժամ 15 րոպե պահումից հետո՝ սառեցումը օդում



Նկ.3. 58.5 հարգի Au-Cu-Ni-Zn 58,5-26,8-8,6-6,1

բաղադրության համաձուլվածքի դիֆրակտոգրերը


ա) ձուլումից հետո,

բ) 250°C-ում 2 ժամ 45 րոպե պահումից հետո՝ սառեցումը օդում,

գ) 250°C-ում 5 ժամ 45 րոպե պահումից հետո՝ սառեցումը օդում,


դ) 250°C-ում 5 ժամ 45 րոպե պահումից հետո՝ սառեցումը օդում և

330°C-ում 1 ժամ պահումից հետո՝ սառեցումը օդում




Նկ.4. 585 հարգի Au-Cu-Ni-Zn 58,5-26,8-8,6-6,1 բաղադրության համաձուլվածք դիֆրակտոգիրը 250°C-ում 2,5 ժամ պահումից հետո՝ սառեցումը վառարանում

Կարգավորման կինետիկայի որոշմանը զուգահեռ կատարվել է նաև միկրոկարծրության որոշում: Նկ.5-ում բերված է 250°C-ում տարբեր պահման տևողությունների դեպքում միկրոկարծրության կախվածությունը պահման տևողությունից: Կարծրության ցուցանիշները միջինացված են, որովհետև դենդրիտային լիկվացիայի հետևանքով հատիկն անհամասեռ է: Այդ տարբերությունը երևում է միկրոկարծրության չափման հետևանքով առաջացած հետքերից (նկ.6):



Նկ.5. Միկրոկարծրության կախվածությունը պահման տևողությունից



Նկ.6. Միկրոկարծրության չափման, հետքերը, (500

Կատարվել են նաև ձուլված և ընտրված ռեժիմներով ջերմամշակված նմուշների ձգման փորձարկումներ 2161 Հ-5 ձգման մեքենայի վրա՝ 2մմ/ր արագությամբ: Որպես նմուշ օգտագործվել են ձուլման սնուցիչները: Քանի որ սնուցիչների կտրվածքը շրջանագծայինից տարբերվում է, պատրաստվել են ԳՈՍՏ 1497-61, նույնը ԳՈՍՏ 1497-84, համապատասխան հնգակի երկարության «կարճ» ձգման նմուշներ, պահպանելով $l_0 = 5,65\sqrt{F_0}$ պայմանը [3]: Ձգման ընթացքում, պարբերաբար, մինչև վզիկի առաջացումը, այսինքն մինչև առավելագույն ուժի ցուցանիշը, չափվել է կտրվածքի մակերեսը՝ $F_{վզ}$ -ն, որի միջոցով որոշվել է հարաբերական նեղացումը մինչև վզիկի առաջացումը՝ $\psi_{վզ}$ [4]:


$$\psi_{վզ} = \frac{F_0 - F_{վզ}}{F_0},$$

որտեղ F_0 -ն նմուշի նախնական կտրվածքի մակերեսն է, մմ²,

Fվգ-ն նմուշի կտրվածքի մակերեսն է, որը համապատասխանում է առավելագույն ուժին, մւժ:

Կառուցվել են հոսունության լարման և հարաբերական նեղացման՝ σ_s - ψ , ինչպես նաև հոսունության լարման և հարաբերական երկարացման՝ σ_s - ε գրաֆիկները, որոնք բերված են նկ.7-ում:

Նշված գրաֆիկները ցույց են տալիս, որ փորձարկումների տվյալներին ավելի լավ են համապատասխանում σ - Ψ գրաֆիկի ցուցանիշները, որոնք համարյա համընկնում են փորձնական տվյալների հետ:



Նկ.7. Հոսունության լարման և հարաբերական նեղացման (ա), հոսունության լարման և հարաբերական երկարացման (բ) կախվածությունը

Աղյուսակ 2

Փորձնական և գրաֆիկական ցուցանիշների համադրում

Համաձուլվածք	Փորձնական σ_d , ՄՊա	σ_d , ըստ σ_s - Ψ գրաֆիկի, ՄՊա	σ_d , ըստ σ_s - ε գրաֆիկի, ՄՊա
ձուլումից հետո	536	528	553
250°C, պահում 2.5 ժամ, սառեցում օդում (կարգավ.)	607	600	640
250°C, պահում 2.5 ժամ, սառեցում վառարանում	731	718	731


Միաժամանակ որոշվել է ձուլված և տարբեր ռեժիմներով ջերմամշակված համաձուլվածքների ամրացման ցուցանիշները՝ ուր: Այն բնութագրում է մետաղի ամրացման ունակությունը պլաստիկ դեֆորմացման ընթացքում: Այդ մեծությունը ձգման փորձարկման դեպքում ֆունկցիոնալ կապված է հարաբերական նեղացման հետ [4, 5]:

$$n = \frac{\Psi_{\text{պ}}}{1 - \Psi_{\text{պ}}} :$$

Դեֆորմացման ամրացման ցուցանիշը առավելագույն է կարգավորված նմուշների համար.

$n_d=0,20$ ձուլված համաձուլվածքների համար,
 $n_{\text{օդ}}=0,25$ 250°C, 2,5 ժամ պահում, օդում սառեցումից հետո,
 $n_{\text{վառ}}=0,136$ 250°C, 2,5 ժամ պահում, վառարանում սառեցումից հետո:

Կատարված հետազոտությունների հիման վրա մշակվել են նախնական և վերջնական ջերմամշակման տեխնոլոգիաներ (նկ.8): Որպես նախնական ջերմամշակման տեխնոլոգիա ընտրված է 250°C տաքացում, պահում 2,5 ժամ և սառեցում օդում կամ ջրում՝ կախված նմուշի հաստությունից:



Նկ.8. Նախնական (ա) և վերջնական (բ) ջերմամշակման տեխնոլոգիական սխեմաները

Այս ռեժիմը ապահովում է նվազագույն կարծրություն և առավելագույն պլաստիկություն, այսինքն՝ մշակելիության բարձրացում: Որպես վերջնական ջերմամշակման տեխնոլոգիա ընտրվել է 250°C տաքացում, պահում 2,5 *ժամ* և սառեցում վառարանի հետ միասին՝ ~7°C/ժ արագությամբ, որն ապահովում է առավելագույն կարծրություն և ամրություն, այսինքն բարելավվում են շահագործման հատկություններն ու ապրանքային տեսքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Мальшев В.М., Румянцев Д.В.** Золото. -М.:Металлургия, 1979. -286с.
2. **Золоторевский В. С.** Механические свойства металлов. 3-е изд. -М.:МИСИС, 1998. -400с.
3. **Металлы. Методы механических и технологических испытаний.** -М.:Изд. стандартов, 1965. -236с.
4. **Сторожев М. В., Попов Е.А.** Теории обработки металлов давлением. -М.: Высшая школа, 1963. -389с.
5. **Кроха В.А.** Упрочнение металлов при холодной пластической деформации: Справочник. - М.:Машиностроение, 1980. -157с.

ՀՊՀՀ. Նյութը ներկայացվել է խմբագրություն 05.03.2009:

А.А. АЛАЯН, Л.Р. ГАЛСТЯН

ИССЛЕДОВАНИЕ СТРУКТУРЫ И СВОЙСТВ ЛИТОГО СПЛАВА БЕЛОГО НИКЕЛЬ-ЦИНКОВОГО ЗОЛОТА 585-Й ПРОБЫ ПРИ РАЗЛИЧНЫХ ТЕРМООБРАБОТКАХ

Проведено исследование структуры и свойств литого сплава белого никель-цинкового золота 585-й пробы методами рентгенографических, металлографических, дериватографических анализов при различных термообработках. Разработаны режимы предварительных и окончательных термообработок.

Ключевые слова: термообработка, проба, белое золото, сплав, рентгенографический, металлографический, дериватографический, анализ.

A.A. ALAYAN, L.R. GALSTYAN

RESEARCH OF STRUCTURE AND PROPERTIES FOR CASTED 585 STANDARD WHITE NICKEL-ZINC GOLD ALLOY IN DIFFERENT HEAT TREATMENTS

By X-ray, metallographic, derivatographic analysis methods the structure and properties of casted 585 standard white nickel-zinc gold alloy are studied in different heat treatments. The regimes of preliminary and final heat treatments are developed.

Keywords: heat treatment, standard, white gold, alloy, X-ray, metallographic, derivatographic, analysis.

L.YE. SARGSYAN, MOATASEM M. KH.

MINERALOGY PARTICULARITIES OF GOLD-BEARING SULPHIDIC POLYMETALLIC ORES

The Shaumyan sulphidic collective polymetallic concentrate analysis is carried out by X-ray and microscopic methods, in order to estimate by its example the mineralogical structure and interrelation of minerals for this type of gold bearing copper – zinc – lead complex ores, from the point of view valuable metals recoverability. It is shown that the gold and silver are allocated mainly in sulphide grains which must be decomposed to recover the noble metals. And the some minerals are combined so closely with each other (especially, sphalerite with chalcopyrite and chalcopyrite with galena) that it is quite impossible to separate them in ordinary industrial milling and flotation conditions.

Keywords: mineralogy, sulphide, polymetallic concentrate, chalcopyrite, sphalerite, galena, pyrite, quartz.

The scope of this study is to determine the mineral composition of gold- and silver-bearing ore occurrences in Shaumyan (town Kapan, Armenia) deposit in relation with Um Samuki deposit (Eastern Desert, Egypt) to assess potential behavior of corresponding concentrates in the metallurgical treatment cycle. Both of them are sulphide polymetallic (complex) deposits. Its mineralogical compositions and metallogenic associations are similar.

Shaumyan ore is a copper – zinc - lead sulphide deposit in the southern area of Armenia [1]. It is a polymetallic (complex) ore. Gold – sulphide formation mineral bodies cause the middle drif. They are represented mainly by quartz – sulphide reefs embedded with mineral belts. The average contents of gold is 2.5 g/t, silver 50 g/t, copper 0.6 %.

Um Samuki is a gold bearing volcanogenic massive zinc – copper - lead sulphide deposit in an area of very rugged topography amidst the belt of island arc volcanic rocks [2]. It is the largest in the Egyptian volcanic hosted reserves and the best in ore grade.

Two distinct spatial and mineralogical associations of gold mineralization are identified:

a) Au – Ag – Zn association where gold grades are very low (generally in the range of 0.3...0.4 g/t) and silver is anomalous, averaging 109.25 g/t. This association occurs typically in the upper levels of the deposit where low-temperature sulphides are abundant. This association deposits in the initial stage of the massive sulphide body development where gold was transported as thio-complex $\text{Au}(\text{H}_2\text{S})$ with significant amounts of lead, zinc and silver, usually in the range of 150...250 °C.

b) Au – Cu association typically occurs in the footwall rock alteration zone (the keel zone) and the lowest parts of the massive sulphide body. Gold grades reach up to 5.54 g/t but average is 1 g/t. Silver is very low, usually in the range of 4...10 g/t. Lead usually, but not always, accompanies gold in this association. This association deposited in the later stages where gold and copper were transported as chloride complexes, in relatively high-temperature fluids (> 300 °C) with low pH (< 4.5), low H_2S concentration, high salinity (greater than that of seawater) and moderate to high oxygen fugacity. Deposition took place due to decreasing pH conditions.

The X-ray diffraction analysis, used to identify the main minerals of Shaumyan collective polymetallic concentrate from a commercial batch, is performed on a DRON-2.0 diffractometer

(Russia) with Cu-K α radiation at the Rentgenometric laboratory of SEUA. The diffractogram interpretation was made with American X-ray ASTM Card File [3].

The concentrate size distribution is evaluated using the conventional screening test with a ro-tap and a set of screens from 45 to 160 *microns* particle size and the density is measured using the classical pycnometer method.

Inspection with a light microscope is used to identify and examine gold and silver as well as sulphide mineral particles and their characteristics. For this study the powder samples are mounted in cylindric glass lames with an epoxy resin and carefully polished. Morphological characteristics studied included particle shape (rounded, elongated, irregular, folded, etc.), particle size range, presence and simple percentage of minerals and free metals other than gold, crystalline characteristics (optically flat surfaces, twinned or multiple crystals, and straight edges not created by fracture), surface irregularities (scratching, amalgamation, oxides, traces of gangue materials, fractures, holes, clusters), and general color (rough determination of gold purity and possible surface oxidation).

As it is properly seen from the photomicrograph in Fig. 1 and diffractogram in the Fig. 2, the ore minerals of Shaumyan orebody are represented mainly by sphalerite (ZnS), chalcopyrite (CuFeS₂), galena (PbS), pyrite (FeS₂) and minor tennantite ((Cu,Fe,Ag)As₄S₁₃). Secondary minerals include iron hydroxides (FeOOH, FeOOH.nH₂O), single grains of gold and silver tellurides (Ag₂Te, (Au,Ag)₂Te), native gold and silver. For the case of Um Samuki orebody has nearly the same minerals: sphalerite, chalcopyrite, pyrite, marcasite and galena [4].




Fig. 1. Photomicrograph (x100) of Shaumian polymetallic concentrate showing complex mineralization mainly by various sulphides, tellurides, iron hydroxides and quartz

On the whole 90...95 % sulphides, about 1 % iron hydroxides, and 5 % gangue minerals (mainly quartz) are present in this concentrate.




Fig. 2. Diffractogram scanned with the Shaumian polymetallic collective concentrate

Sphalerite (ZnS) values range 30 to 35 % of the tested concentrate. On the photomicrograph the sphalerite is presented as the free grains as well as in combinations with other sulphide minerals. In some sphalerite grains the chalcopyrite is emulsively by enclosed (random position) and rarely enclosed with gold and silver telluride as well as colloidal particles of native gold and silver.

Chalcopyrite (CuFeS₂) values range within 20...25 % of the concentrate. Mainly it occurs in free grain form with dimensions from some *microns* to 0.05 *mm*. Inclusions of pyrite small grains are observed in the grains of 0.08 *mm*. Certain associations of chalcopyrite with tennantite and sphalerite are noted. Sometimes the spheroidal small including of gold and silver tellurides in 0.01 *mm* sizes are observed in the chalcopyrite grains.

Galena (PbS) values range about 10 % of concentrate. It is present mainly in free grain forms and very rarely combined with chalcopyrite grains.

The pyrite (FeS₂) is present in large amounts. Its values range from 20 to 25 % of concentrate. Pyrite is observed mainly as free grains. Sometimes combinations with chalcopyrite and quartz take place. Sometimes the inclusions of sphalerite and chalcopyrite are enclosed in pyrite grains. The big pyrite grains are cut by mass of thin veins of chalcopyrite, chalcopyrite-tennantite and chalcopyrite-sphalerite-tennantite.

Native gold is observed as the spheroidal free grains with a particle size of 0.01 *mm* in sphalerite and chalcopyrite (fig. 3).




Fig. 3. Photomicrograph (x250) of main mineralization of Shaumian polymetallic concentrate: sphalerite (Sl) in which native gold grain (Au) is observed, chalcopyrite (Cp), galena (Ga) and pyrite (Py)

Native silver occurs more often than gold and is observed in grains of sphalerite, chalcopyrite and galena. Its dimensions are up to 5...7 *microns* (Fig.4).




Fig. 4. Photomicrograph (x400) of Shaumian polymetallic concentrate showing sphalerite (Sl) occurred at the boundary of chalcopyrite (Cp), free grains of sphalerite (Sl), chalcopyrite (Cp) and pyrite (Py) and native silver (Ag) occurred in galena (Ga) grain

The tennantite mineral that is argentiferous tennantite – $(\text{Cu,Fe,Ag})\text{As}_4\text{S}_{13}$ is noted mainly in combinations with chalcopyrite, sometimes with sphalerite and pyrite.

The tellurids are present mainly by smaller enclosures of hessite (Ag_2Te) and pedzite $((\text{Au,Ag})_2\text{Te})$ into grains of sphalerite, chalcopyrite and galena (particle size of 0.02 *mm*), sometimes in cramped associations with native gold.

Iron hydroxides (FeOOH , $\text{FeOOH} \cdot n\text{H}_2\text{O}$) compose less than 1 % of concentrate. They are in the sulphide minerals in a form of thin veins, and very rarely it can be found full oxidized grains as "relict-islands" of sulphides.

Gangue (that is the worthless minerals) values range about 5 % of concentrate. They are present with the quartz, carbonats and rocks containing dilute enclosures of pyrite, sphalerite and chalcopyrite.

As a result, gold and silver in sulphidic polymetallic complex ores are allocated mainly in sulphide grains which must be decoposed to recover the noble metals. Some minerals are combined so closely with each other (especially, sphalerite with chalcopyrite and chalcopyrite with galena) that it is quite impossible to separate them in ordinary industrial milling and flotation conditions.

REFERENCES

1. Геология Армянской ССР. Металлические полезные ископаемые / Под. ред. **С.С. Мкртчяна**. - Ереван: Изд-во АН Армянской ССР, 1967.- 538 с.
 2. **Botros N.Sh.** A new classification of the gold deposits of Egypt // Ore Geology Reviews 25.- 2004.- P. 1-37.
 3. ASTM Card File, ASTM, Philadelphia, 1969.
 4. **Deyab T.M.** A study on the geology and genesis of some Zn - Pb deposits in the Eastern Desert of Egypt (Um Samuki and Um Gheig areas): MSc thesis/ Ain Shams University.- Egypt, 1986.- 85 p.
- SEUA. The material is received 19.03.2009.

Լ.Ե. ՍԱՐԳՍՅԱՆ, ՄՈԱՏԱՍԵՄ Մ.Ֆ.

ՈՍԿԵՏԱՐ ՍՈՒԼՖԻԴԱ-ԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԻՆԵՐԱԼՈԳԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռենտգենաֆազային և մանրադիտակային վերլուծության մեթոդներով հետազոտվել է Շահումյանի միասնական սուլֆիդա-բազմամետաղային խտանյութը՝ դրա օրինակով գնահատելու համար այդ համալիր տեսակի ոսկետար պղինձ – ցինկ – կապարային հանքանյութերի միներալոգիական կազմը և միներալների փոխհարաբերությունը՝ արժեքավոր մետաղների կորզվելիության առումով: Ցույց է տրված, որ ոսկին և արծաթը բաշխված են հիմնականում սուլֆիդային հատիկներում և որ դրանք պետք է քայքայվեն, որպեսզի կորզվեն ազնիվ մետաղները: Որոշ միներալներ այն աստիճանի են սերտաճած մեկը մյուսին (հատկապես, սֆալերիտը խալկոպիրիտի հետ և խալկոպիրիտը՝ գալենիտի), որ անհնար է դրանց տարանջատել հանքանյութի սովորական արտադրական մանրացման և ֆլոտացման պայմաններում:

Առանցքային բաներ. միներալոգիա, սուլֆիդ, բազմամետաղային խտանյութ, խալկոպիրիտ, սֆալերիտ, գալենիտ, պիրիտ, քվարց:

Л.Е. САРГСЯН, МОАТАСЕМ М.Ф.

ОСОБЕННОСТИ МИНЕРАЛОГИИ ЗОЛОТОСОДЕРЖАЩИХ СУЛЬФИДНО-ПОЛИМЕТАЛЛИЧЕСКИХ РУДОМАТЕРИАЛОВ

Методами рентгенофазового и микроскопического анализов исследован Шаумянский коллективный полиметаллический концентрат для оценки на его примере минерального состава и взаимоотношениях минералов в такого рода комплексных золотосодержащих медь-цинк-свинцовых рудоматериалах с точки зрения извлекаемости ценных металлов. Показано, что золото и серебро распределены в основном в сульфидных зернах, которые должны быть разложены для извлечения благородных металлов. Некоторые минералы объединены настолько тесно (особенно сфалерит с халькопиритом, халькопирит с галенитом), что вовсе невозможно разделить их в обычных условиях производственного измельчения и флотации.

Ключевые слова: минералогия, сульфид, полиметаллический концентрат, халькопирит, сфалерит, галенит, пирит, кварц.

Ա.Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԽԱԼԿՈՂԻՐԻՏԻ ՎԱՐՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ՊՂՆԱՅԻՆ ԽՏԱՆՑՈՒԹԻ
ՀԻՂՈՔԼՈՐԻԴՍՅԻՆ ՏԱՐՐԱԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ




Խալկոպիրիտի վարքը պղնձի երկվալենտ իոններ պարունակող նատրիումի քլորիդի 30%-անոց ջրային լուծույթում հետազոտված է ջերմաժանրաչափական ու դիֆերենցիալ-ջերմային վերլուծության և նորմալ պայմաններում տարրալուծման եղանակներով: Ցույց է տրված, որ խալկոպիրիտը նորմալ պայմաններում ամբողջովին տարրալուծվում է 85°C-ում՝ խլուսի անընդհատ խառնման և օդամղման դեպքում:

Առանցքային բառեր. խտանյութ, խալկոպիրիտ, հիդրոքլորիդային տարրալուծում, դիֆերենցիալ-թերմիկական վերլուծություն, քլորիդ-իոն:

Խալկոպիրիտը (CuFeS_2) պղնձի ամենազխավոր միներալն է՝ 34,5% Cu պարունակությամբ: Պղնձի մյուս միներալների՝ բորնիտի (Cu_5FeS_4), խալկոզինի (Cu_2S), կովելինի (CuS), մալախիտի ($\text{Cu}_2\text{CO}_3(\text{OH})_2$), ազուրիտի ($\text{Cu}_3(\text{CO}_3)_2(\text{OH})_2$), կուպրիտի (Cu_2O), տենորիտի (CuO) և քրիզոկոլայի ($\text{CuSiO}_3(2\text{H}_2\text{O})$) համեմատությամբ, այն ամենադժվարահալն է ու «համառը» (վերամշակվելիության տեսակետից) [1]: Պղնձի կորզումը դրանից իրականացվում է հիմնականում պիրոմետալուրգիական եղանակով:


Բովվածքների հիդրոմետալուրգիական վերամշակման (տարրալուծման) մեթոդի կիրառումը խալկոպիրիտային խտանյութերի նկատմամբ, ի տարբերություն ցինկի խտանյութի (հիմնականում ZnS), գործնականում չի կիրառվում, քանի որ խորին («մեռյալ») բովման ժամանակ բարձր ջերմաստիճաններում գոյանում է մեծ քանակությամբ պղնձի ֆերիտ (CuFe_2O_4), որը շատ դժվար է լուծվում թթվային և հիմնային լուծույթներում [2]: Խալկոպիրիտի ուղղակի թթվային կամ հիմնային տարրալուծումը նույնպես կապված է որոշակի դժվարությունների հետ: Այսպես, ծծմբական թթուն չի լուծում խալկոպիրիտին, սակայն պրոցեսն ինտենսիվանում է հիդրոլիզի ընթացքում գոյացած երկաթի աղերով: Լուծույթում նատրիումի քլորիդի ավելացման դեպքում խալկոպիրիտի լուծելիությունը ծծմբական թթվում շատ ավելի զգալի է դառնում [3]: CuFe_2O_4 – ը նույնիսկ 0,1% NaCN – ի ջրային լուծույթում, 45°C – ում տարրալուծվում է ընդամենը 8,2% – ով [4]:

Պղնձի սուլֆիդների օքսիդացման ավտոկլավային գործընթացներն ընթանում են համեմատաբար բարձր ջերմաստիճաններում (մինչև 300°C) և թթվածնի բարձր ճնշման (մինչև 2500 ԿՊա) պայմաններում՝ կիրառելով ծծմբաթթվային և ամոնիակային լուծույթները [5, 6]: Մասնավորապես, խալկոպիրիտի օքսիդացումը ծծմբաթթվային լուծույթում 120...180°C ջերմաստիճաններում, թթվածնի 175...2550 կՊա ավելցուկային ճնշման և լուծույթի $\text{pH} = 0,7...2$ պայմաններում ինտենսիվանում է թթվածնի ճնշման ավելացմանը զուգընթաց, սակայն 180°C-ում ճնշման աճը գրեթե չի ազդում լուծելիության վրա: Բարձր թթվայնության և թթվածնի ավելցուկային ճնշման աճի դեպքում էլեմենտար ծծումբ է անջատվում, մինչդեռ 700 կՊա-ից ցածր ճնշման դեպքում անջատվում է ծծմբաջրածին (H_2S)՝



Նկ.1-ում բերված դերիվատոգրից երևում է, որ խտանյութի տարրալուծման գործընթացը բաղկացած է երկու տարաբնույթ փուլերից, կապված խտանյութի հիմնական բաղադրիչի՝ խալկոպիրիտի փոխարկումների հետ, որոնք ուղեկցվում են համապատասխան ջերմակլանիչ և ջերմաանջատիչ էֆեկտներով և նմուշի զանգվածի փոփոխությամբ (տես DTA, TG և DTG կորերը):

Նմուշի զանգվածի կորուստը 145 *քույե* տևողությամբ առաջին փուլում (25...86 °C), ակնհայտորեն, պայմանավորված է խլուսում առկա H₂O-ի գոլորշիացմամբ, որն ուղեկցվում է համապատասխան ջերմակլանիչ էֆեկտով DTA կորի վրա: Նույն տիրույթում փորձով ապացուցված է նաև խալկոպիրիտային պղնձի անցումը դեպի լուծույթ իր ելային բաղադրության 6,5%-ի չափով, որն ակնհայտորեն պայմանավորված է խալկոպիրիտի հիդրոքլորիդային տարրալուծման ռեակցիայով՝



Չնայած FeOOH-ի թերմոդինամիկական տվյալների բացակայության պատճառով հնարավոր չէ հաշվել (4) ռեակցիայի էնթալպիայի ու էնտրոպիայի փոփոխությունների արժեքները և կազմել Գիբսի ազատ էներգիայի ջերմաստիճանային կախվածության հավասարումը, սակայն, ինչպես կարելի է նկատել T կորի ընթացքից, այդ ռեակցիան ուղեկցվում է շատ մեծ ջերմակլանիչ էֆեկտով, այնքանով մեծ, որ կարողանում է շեղել նմուշի ջերմաստիճանի փոփոխության ֆունկցիան ուղղագծային օրենքից (վառարանի ջերմաստիճանը բարձրանում է 5°C/րոպե հաստատուն արագությամբ, անկախ նմուշի ջերմաստիճանից): Ընդ որում, T կորի շեղումը սկսվում է ~ 65 °C-ից, որը կարելի է համարել խալկոպիրիտի հիդրոքլորիդային տարրալուծման սկզբի ջերմաստիճանը:

Ջրի գոլորշիացման և խալկոպիրիտի տարրալուծման ռեակցիաների հետևանքով DTA կորի 25-ից մինչև 86 °C հատվածում առաջ եկած ընդհանուր ջերմակլանիչ էֆեկտից հետո ի հայտ է գալիս նոր ջերմակլանիչ էֆեկտ 96°C մաքսիմումով, որն ակնհայտորեն պայմանավորված է մնացորդային ջրի եռման ու ինտենսիվորեն գոլորշիացման հետ, ինչը T կորի վրա արտահայտված է 100°C պիկով:

Պրոցեսի մեկնարկից 145 *քույե* անց, նմուշի լրիվ ջրազրկումից հետո (այդ պահից սկսած դադարում է նմուշի զանգվածի կորուստը), խալկոպիրիտի փոխազդեցությունը պղնձի երկվալենտ քլորիդի հետ պայմանավորված կլինի պինդ ֆազային հետևյալ էկզոթերմիկ ռեակցիայով՝



$$\Delta G^0 = -281,8 - 0,122 T \text{ կՋ/մոլ},$$

որի ջերմաանջատիչ էֆեկտն իր մեծությամբ, ինչպես նաև նմուշի զանգվածը մնում են գրեթե անփոփոխ մինչև պրոցեսի ավարտը (տես DTA, TG և DTG կորերը): Այդ փաստը ապացուցված է պրոցեսի վերջում ստացված արգասիքում միավալենտ պղնձի բաղադրության վերլուծության արդյունքներով:

Նմուշի տարրալուծման անհամեմատ ցածր արագությունը դերիվատոգրաֆային պայմաններում պայմանավորված է նրանով, որ մի կողմից հնարավոր չէ խառնել խլուսը և նրանում օդամղում իրականացնել, իսկ մյուս կողմից՝ կանխել ջրի գոլորշիացումը (առկա է մասշտաբային գործոնի դերը, քանի որ փոքրածավալ նմուշը տեղադրված է համեմատաբար շատ մեծ վառարանային տարածքում): Խլուսի անշարժության պատճառով տարրալուծման սկզբնական շրջանում ռեակցիայի հետևանքով անջատված

տարրական ծծումբը, ինչպես հայտնի է [7], աստիճանաբար ծածկելով միներալի մակերևույթը, մեկուսացնում է այն լուծույթի քայքայիչ ազդեցությունից:


Իրական պայմաններում (առանց դերիվատոգրաֆի), քանի որ խլուսն ինտենսիվորեն խառնվում է և պրոցեսի ընթացքում կատարվում է անընդհատ օդամղում, ծծմբի անջատվածքները չեն կարող պատել միներալի հատիկները (փորձը ցույց է տալիս, որ դրանք նույնիսկ ֆլոտացվում են դեպի լուծույթի մակերես), որի շնորհիվ տարրալուծումն իրականանում է կինետիկական ռեժիմում, բարձր արագությամբ (աղյուսակ 2), իսկ խալկոպիրիտային երկաթն ուղղակիորեն է օքսիդանում մինչև հեմաթիտի (առանց միջանկյալ FeOOH -ի գոյացման):

Աղյուսակ 2

85°C-ում, խլուսի անընդհատ խառնման և ինտենսիվ օդամղման պայմաններում խալկոպիրիտային խտանյութի հիդրոքլորիդային տարրալուծման տվյալները

Տևողությունը, ժամ	2	4	6	8	18
Պղնձի տարրալուծման աստիճանը, %	16,5	28,2	41,1	53,3	96,7

Ռենտգենակառոցվածքային վերլուծության (ժՇԿԾ-2,0 , $\text{CuK}\alpha$ -ճառագայթմամբ) տվյալներով (նկ.2) 18 տևողությամբ կատարված տարրալուծման սորախցուկի հիմնական բաղադրիչը իրոք Fe_2O_3 -ն է:



Նկ.2. Խալկոպիրիտային խտանյութի տարրալուծման սորախցուկի ռենտգենագիրը

Այսպիսով, խալկոպիրիտը հուսալիորեն կարող է տարրալուծվել պղնձի երկվալենտ իոններ պարունակող նատրիումի քլորիդի հազեցած ջրային լուծույթում խլուսի ինտենսիվ խառնման և օդամղման պայմաններում: Որպես տարրալուծման գործընթացի լավարկված ջերմաստիճան երաշխավորվում է 85°C-ը: Պրոցեսի տևողությունը կախված է միներալի հատիկաչափական կազմից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Tranquilla J.M.** Mineral Extraction and the Use of Microwaves // Proceedings of CIM Conference.- Vancouver, British Columbia, Canada, April 27, 1997.
2. **Antonucci V.**, Correa C. Sulfuric Acid Leaching of Chalcopyrite Concentrate Assisted by Application of Microwave Energy // Proceedings of the Copper 95-Cobra 95 International Conference.-1995.-V.3.- P.549-557.
3. **Munoz-Ribadeneiza F.J., Gombert H.J.** // Nucl. Technol.-1971.- V.11, №3.-P. 367-371.
4. **Hedley N., Tabachnick H.** Chemistry of cyanidation. Mineral Dressing Notes 23 / American Cyanamid Company. - New York.-1958.
5. **Warren J.H., Austra I.** // J. Appl. Sci.-1958.-V.9, №1.-P.36-51.
6. **Набойченко С.С., Доржпурев М.** Автоклавное сернокислотное выщелачивание халькозинового концентрата месторождения <<Эрденет>> // Изв. вузов. Цветная металлургия.- 1982.-№6.-С.29-31.
7. **Peters E.** Leaching of sulphides // Advances in Mineral Processing/ Ed. P. Somasundaran. - SME-AGME.- P. 445-462.

ՀՊՀՀ: Նյութը ներկայացվել է խմբագրություն 03.03.2009:

А.М. ОГАНЕСЯН

ИССЛЕДОВАНИЕ ПОВЕДЕНИЯ ХАЛЬКОПИРИТА В ПРОЦЕССЕ ГИДРОХЛОРИДНОГО ВЫЩЕЛАЧИВАНИЯ МЕДНОГО КОНЦЕНТРАТА

Исследовано поведение халькопирита в 30%-ном водном растворе хлорида натрия, содержащего Cu(II) ионы, методом термогравиметрического и дифференциально-термического анализа в нормальных условиях. Показано, что халькопирит в нормальных условиях полностью выщелачивается при 85 °С с непрерывным перемешиванием пульпы и подачей воздуха.

Ключевые слова: концентрат, халькопирит, гидрохлоридное выщелачивание, дериватограмма, двуххлорид.

A.M. HOVHANNISYAN

CHALCOPYRITE BEHAVIOUR INVESTIGATIONS IN COPPER CONCENTRATE LEACHING PROCESS

The behaviour of chalcopyrite in 30% sodium chloride aqueous solution with Cu(II) ions is investigated by the methods of thermogravimetric and differential-thermic analysis and leaching in normal conditions. It has been shown that chalcopyrite can completely be leached in normal conditions at 85⁰C, with continually pulp agitation and air innings.

Keywords: concentrate, chalcopyrite, hydrochloridation leaching, differential-thermic analysis, chloride-ion.

Ա.Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ, Ս.Մ. ԻՍԴԱՅԵԼՅԱՆ

ՄՈԼԻԲԴԵՆԻՍԱՅԻՆ ԽՏԱՆՑՈՒԹԵՐՈՒՑ ՄԱՔՈՒՐ ԵՎ ԴԻՄԴԵՐՍ ՄՈԼԻԲԴԵՆԻ ԴԻՍՈՒԼՖԻԴԻ ՍՏԱՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Մշակվել է մոլիբդենիտային խտանյութերից մաքուր և դիսպերս մոլիբդենի դիսուլֆիդի ստացման տեխնոլոգիա: Հետազոտվել են ֆլոտոռեագենտներից մաքրման և պարզվածքագատման եղանակով շլամագերծման, խառնուրդների ընտրողական տարրալուծման եղանակով մոլիբդենիտային խտանյութերի մաքրման գործընթացները: Ընտրված են տեխնոլոգիական գործընթացների օպտիմալ ռեժիմները:

Առանցքային բառեր. մոլիբդենիտային խտանյութ, ֆլոտոռեագենտ, պարզվածքագատում, տարրալուծում, մոլիբդենի դիսուլֆիդ:

Բնական մոլիբդենիտի բյուրեղն ունի հեքսագոնալ շերտավոր կառուցվածք [1]: Տարրական բջիջն ունի վեց ատոմ ծծումբ, որոնք տեղակայված են մոլիբդենի ատոմների շուրջը՝ եռանկյուն պրիզմայի զագաթներում: Շերտավոր կառուցվածքի շնորհիվ մոլիբդենի դիսուլֆիդը որոշակի պայմաններում տրոհվում է նանոչափերի բյուրեղների:


Պինդ մարմինների հալակում մոլիբդենի դիսուլֆիդն առաջացնում է սահմանային շերտեր և ձեռք է բերում յուղման հատկություններ: Տեխնիկայում այն օգտագործվում է որպես պինդ քսանյութ: Կիրառվում է պինդ թաղանթի տեսքով, երկարաժամկետ քսանյութ ճշգրիտ մեխանիկայում, փոշեձև քսանյութ գլոցման և գլանման գերծընթացներում, յուղերում և պլաստմասաներում որպես հավելանյութ, ինչպես նաև մետաղակերամիկական և պոլիմերային հակաշփական նյութերում և այլն [2]:

Հայտնի եղանակներով մաքուր $2H - MoS_2$ -ի ստացումը պահանջում է ռեագենտների մեծ ծախս և երկարաժամկետ մշակում [3-6]:

Աշխատանքի նպատակն է՝ մշակել տեղական մոլիբդենիտային խտանյութերի համալիր վերամշակմամբ նոր, բնապահպանական նորմերին բավարարող տեխնոլոգիա, որը թույլ կտա ստանալ բարձր մաքրության և դիսպերսության մոլիբդենի դիսուլֆիդ:

Մոլիբդենիտային խտանյութերից բարձր մաքրության և դիսպերսության մոլիբդենի դիսուլֆիդի ստացման տեխնոլոգիական սխեման բերված է նկ. 1-ում: Հետազոտությունների համար որպես ելանյութ է ընտրվել Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից թողարկված մոլիբդենիտային խտանյութը: Խտանյութի օրինակելի քիմիական բաղադրությունը բերված է աղյուսակում:

Մոլիբդենիտային խտանյութը պարունակում է 2...4% ֆլոտոռեագենտներ, որոնք արդյունաբերական նավթայուղեր են, կերոսին, բուտիլային քսանթագենատ և այլն: Մյուսը զգալի դժվարություններ են առաջացնում խտանյութերի, խառնուրդներից մաքրման հիդրոմետալուրգիական գործընթացում: Խառնուրդների մասնիկները պատված են յուղերի թաղանթով, և եթե այն չհեռացվի մասնիկի մակերևույթից, ապա ընտրողական տարրալուծման գործընթացում մասնիկները կմնան լուծիչի նկատմամբ մեկուսացված, բացի դրանից, դժվարանում է նաև մայրակ լուծույթներից մոլիբդենի կորզումը: Այդ իսկ պատճառով, առաջնային խնդիր է խտանյութերի մաքրումը այդ յուղերից:



Նկ.1. Մաքուր մոլիբդենի դիսուլֆիդի ստացման տեխնոլոգիական սխեման

Մոլիբդենիտային խտանյութերի օրինակելի քիմիական կազմը, %									
Mo	Cu	Fe	S	SiO ₂	Al ₂ O ₃	CaO	MgO	Re	H ₂ O+ֆլուտո- ռեագենտ
48,4	0,87	2,75	33,1	6,14	1,06	1,02	0,47	0,025	8,0


Ֆլուտոռեագենտներից խտանյութի մաքրումը կատարվել է էմուլսարարների ջրային լուծույթներով (նատրիումի մետասիլիկատ, ՕՊ - 7, ՕՊ - 10), որոնք օժտված են լվացող հատկություններով: Դրանք չեզոքացնում են ճարպաթթուները՝ առաջացնելով համապատասխան թթուների լուծվող աղեր, որոնք գտնվում են լուծույթում՝ կախված վիճակում: Փորձարկվել են Na₂SiO₃-ի և ՕՊ-7-ի օգտագործման մի քանի տարբերակներ:

1) խտանյութի նախնական մաքրումը կատարվել է նատրիումի մետասիլիկատի և ՕՊ-7-ի ջրային լուծույթով սենյակային ջերմաստիճանում և 80°C-ում,

2) խտանյութը մանրացվել է աղացում՝ նատրիումի մետասիլիկատի և ՕՊ-7-ի առկայությամբ՝ սենյակային ջերմաստիճանում,

3) այդ խառնուրդի խմորանման զանգվածի մանրացումը աղացում:

Արդյունքների գրաֆիկական պատկերը բերված է նկ. 2-ում: Փորձերի արդյունքները ցույց են տալիս, որ լավ արդյունքներ ստացվում են երկրորդ և երրորդ տարբերակների դեպքում:



Նատրիումի մետասիլիկատի քանակությունը, կգ/տ

Նկ. 2. Ֆլուտացիոն յուղերից խտանյութի մաքրման գործընթացի արդյունքները՝ կախված նատրիումի մետասիլիկատի պարունակությունից (1-սենյակային ջերմաստիճանում առանց մանրացման, 2- 80...85°C-ում առանց մանրացման, 3- սենյակային ջերմաստիճանում 15 րոպե մանրացմամբ, 4- 75 րոպե մանրացմամբ)


Ֆլուտոռեագենտների մաքրումից հետո հնարավորություն է ստեղծվում մանրացված խտանյութը պարզվածքազատման եղանակով մաքրել նաև շլամից՝ SiO₂-ից և ածխային մասնիկներից: Դրա համար լվացված խտանյութը խառնվում է ջրի հետ: Խառնուրդից երկու-երեք րոպե հետո, կախված տեսակարար կշիռների տարբերությունից (MoS₂ - 4,7...4,8 գ/սմ³, շլամը - 2,1...2,6 գ/սմ³), մոլիբդենի դիսուլֆիդը նստում է, իսկ շլամն այդ ընթացքում չի հասցնում նստել և հեռացվում է:

Այնուհետև ուսումնասիրվել է մոլիբդենիտային խտանյութերի մաքրումը Ca, Mg, Bi և մասնակի Fe, Al խառնուրդներից՝ երեք տոկոսանոց ազոտական թթվով տարրալուծման միջոցով: Ուսումնասիրությունները կատարվել են խառնուրդների

ընտրողական տարրալուծումով, առանց մոլիբդենի դիսուլֆիդի զգալի քայքայման: Փորձերը կատարվել են 20°C , 40°C , 60°C ջերմաստիճաններում և 1, 3, 5 ժամ տևողությամբ:

Նախատեսված ժամանակամիջոցում խառնելուց հետո խյուսը ֆիլտրվում է և ֆիլտրի վրա ջրով լվացվում է մինչև $\text{pH} = 6 \dots 6,5$: Ստացված լուծույթը և լվացման ջրերը հավաքվել և ենթարկվել են վերլուծության: Խտանյույթը չորացվել է և նույնպես ենթարկվել վերլուծության:


Հետազոտվել է ջերմաստիճանի և տևողության ազդեցությունը խտանյույթի, մոլիբդենիտի և երկաթի տարրալուծման աստիճանի վրա: Նկ. 3-ում բերված գրաֆիկից երևում է, որ խտանյույթի տարրալուծման գործընթացում ջերմաստիճանի ազդեցությունն ակնհայտ է և $1 \dots 2$ ժամ տևողության դեպքում խտանյույթի տարրալուծման աստիճանը զգալի աճում է: Ջերմաստիճանի հետագա բարձրացմամբ մինչև 60°C , ավելի քիչ տարբերություն է նկատվում: Տարրալուծման աստիճանը առաջին $1 \dots 1,5$ ժամվա ընթացքում կտրուկ աճում է, իսկ այնուհետև՝ նվազում:




Նկ. 3. 3%- անոց ազոտական թթվով մոլիբդենիտային խտանյույթի տարրալուծման կինետիկան (1- 20°C -ում, 2- 40°C -ում, 3- 60°C -ում)

Մոլիբդենիտի տարրալուծման աստիճանը առաջին մեկ ժամվա ընթացքում աճում է, այնուհետև՝ կապված մոլիբդենաթթվի առաջացման հետ, մոլիբդենիտի տարրալուծման աստիճանը նվազում է, քանի որ մոլիբդենաթթուն արգելք է հանդիսանում՝ նստվածքաշերտ գոյացնելով MoS_2 -ի հատիկների վրա (նկ. 4):

Նկ. 5-ից երևում է, որ տարրալուծման ջերմաստիճանի և ժամանակի բարձրացմանը զուգընթաց մոլիբդենի անցումը լուծույթ (ըստ սկզբնական բաղադրության) աննշան է:



Նկ. 4. Տարրալուծման գործընթացում մոլիբդենիտի լուծման աստիճանի կախվածությունը պահման տևողությունից (1-20°C-ում, 2-40°C-ում, 3-60°C-ում)



Նկ. 5. Տարրալուծման գործընթացում մոլիբդենի լուծման աստիճանի (ըստ սկզբնական բաղադրության) կախումը գործընթացի տևողությունից

Նկ. 6-ում բերված է խտանյութից երկաթի տարրալուծման կինետիկական բնութագիրը: Խտանյութում երկաթի պարունակությունը 3,49%-ից նվազում է և 40°C-ում 5 ժամ տարրալուծելիս ստացվել է 2,98%, իսկ 60°C-ում՝ 2,86%: 40°C-ում 5 ժամ տարրալուծելիս երկաթի լուծելիությունը սկզբնականի համեմատ հասնում է 22,47%-ի, իսկ Ca, Mg, Bi լրիվ անցնում են լուծույթ: Օպտիմալ պայմաններն են՝ ջերմաստիճանը՝ 40°C, տևողությունը՝ 5 ժամ:


Քանի որ SiO₂-ը (քվարց) կցակապված է Fe-ի ու Cu-ի սուլֆիդների (FeS₂, CuFeS₂) հետ, նախապես ազատվում ենք SiO₂-ից: SiO₂-ից խտանյութի մաքրումը կատարվում է ֆտորաջրածնային թթվով տարրալուծմամբ: Ուսումնասիրվել է 20...22% ֆտորաջրածնային թթվով տարրալուծման գործընթացը 40 և 60°C ջերմաստիճաններում, 2...12 ժամ տևողության պայմաններում:

Տարրալուծումից հետո խյուսը ֆիլտրվել է և լվացվել մինչև pH=6,2...6,7 սահմաններում: Լվացված խտանյութը ենթարկվել է վերլուծության: Արդյունքները բերված են նկ. 7-ում: Գրաֆիկից երևում է, որ տվյալները լավանում են՝ ավելացնելով տարրալուծման ժամանակը և ջերմաստիճանը: Լավագույն տվյալները ստացվել են 60°C ջերմաստիճանում 12 ժամ տևողությամբ տարրալուծելիս: SiO₂-ը կազմել է 0,04...0,006%:

Միլիցիումից մաքրված խտանյութը ենթարկվում է երրորդ տարրալուծման 5...8%-անոց ազոտական թթվով, որի նպատակն է մնացած Al₂O₃ և Fe-ի ու Cu-ի սուլֆիդների (FeS₂, CuFeS₂) հեռացումը: Ուսումնասիրությունները կատարվել են հետևյալ ջերմաստիճաններում. 40 և 60°C, ժամանակամիջոցը՝ 6, 8, 12, 16 ժամ: Օպտիմալ

պայմաններն են. ջերմաստիճանը՝ $55...60^{\circ}\text{C}$, տարրալուծման ժամանակամիջոցը՝ 15...16 ժամ:


Առաջացած շատ փոքր քանակի մոլիբդենի եռօքսիդի և մոլիբդենաթթվի հեռացման համար խտանյութը լվացվում է 12% -անոց ամոնիակի լուծույթով: Խտանյութը ամոնիակի ջրային լուծույթով տարրալուծումից հետո լվացվել է թորած ջրով, էթիլ սպիրտով և չորացվել վակուումային չորանոցում՝ 120°C ջերմաստիճանում:



Նկ. 6. Խտանյութում երկաթի զանգվածային բաժնի կախվածությունը ժամանակից և ջերմաստիճանից (1- 20°C -ում, 2- 40°C -ում, 3- 60°C -ում)

Խտանյութի հետագա մանրացումը կատարվել է օդա-շիթային ուղղահայաց խողովակային խցիկով աղացում: Նկ. 8-ում բերված է օդա-շիթային աղացում մանրացված մաքուր մոլիբդենի դիսուլֆիդի հատիկների ձևը, որը ստացվել է TS5130MM մակնիշի Tescan էլեկտրոնային մանրադիտակի միջոցով: Մանրալուսանկարում ներկայացված են փոշեհատիկների չափերը:


Խտանյութի այսպիսի մշակումն ապահովում է բարձր մաքրության մոլիբդենի դիսուլֆիդի ստացումը, որը գերազանցում է TY - 48-19-133-90 -ի պահանջները:



Նկ. 7. Խտանյութում SiO_2 -ի զանգվածային բաժնի կախումը ժամանակամիջոցից և ջերմաստիճանից

Մոլիբդենիտային խտանյութերի համալիր վերամշակման նպատակով և շրջակա միջավայրի պաշտպանության առումով, ուսումնասիրվել է Mo և Fe պարունակող լուծույթներից երկաթի մոլիբդատի $Fe_2(MoO_4)_3$ ստացումը ամոնիակաջրով չեզոքացման եղանակով:

Գործընթացում օգտագործվող նատրիումի մետասիլիկատի, ազոտական թթվի, ֆտորաջրածնային թթվի, ամոնիումի հիդրօքսիդի վերաօգտագործման նպատակով թթու և հիմնային լուծույթները չեզոքացվում են:




